



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2024 թվականի N 1620-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 960-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 960-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) հավելվածը 234-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 235-րդ կետով.

235.	8702400009	Տրոլեյբուս	<p>Արտադրություն՝ 2024 թվական, չշահագործված Մակնիշ՝ ZHONGTONG BUS LC6126EVG Անվտանգության ստանդարտներ՝ – բավարարում են ՀՀ-ում գործող ՄՄ հանձնաժողովի «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) որոշմամբ ընդունված տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին: Գարարիտային չափերը՝ – երկարությունը՝ 12200մմ; – լայնությունը՝ 2550մմ; – բարձրությունը՝ 3700մմ; – անվային բազան՝ 6000մմ; – սրահի բարձրությունը՝ 2390մմ: Զանգվածը՝</p>	հատ	15	Չինաստան	Չինաստան	1 518 000 000	
------	------------	------------	--	-----	----	----------	----------	---------------	--

			<p>– առավելագույն համախառն զանգվածը՝ 19500 կգ;</p> <p>– լիցքավորված՝ 13500 կգ:</p> <p>Ուղևորատարողությունը՝ Առավելագույն տարողությունը՝ 85 մարդ;</p> <p>– փափուկ նստատեղեր՝ 25+2</p> <p>– հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար սրահում կա հաշմանդամային սայլակի համար նախատեսված գոտի, իսկ մեջտեղի դռան մոտ՝ ետծալովի թեքահարթակ:</p> <p>Չափանիշներ՝</p> <p>– տրոլեյբուսները կարող են աշխատել էլեկտրաէներգիայի ստացման երկու եղանակով՝ հպակային ցանցից սնուցմամբ կամ</p>						
--	--	--	--	--	--	--	--	--	--

		<p>կողեզրին ուժակուտակիչ մարտկոցից սնուցմամբ՝ ինքնավար ընթացքով;</p> <ul style="list-style-type: none"> – գործում է տեսահսկման համակարգ, որն իր մեջ ներառում է 8 տեսախցիկներ: – ունեն սրահի տեսահսկման գրանցումների պահպանման հնարավորություն: Աշխատանքային միջավայր՝ – տրոլեյբուսները կարող են կանտնավոր աշխատել շրջակա միջավայրի -35°C-ից մինչև 55°C ջերմաստիճանի դեպքում; – ցանկացած բաց ուղևորային դռան դեպքում տրոլեյբուսը գտնվում է արգելակման վիճակում: Տեխնիկական չափանիշներ՝ – առավելագույն արագությունը լրիվ ծանրաբեռնվածությամբ, հպակային 					
--	--	---	--	--	--	--	--

		<p>ցանցից դուրս՝ 65 կմ/ժ (օդորակիչի անջատման դեպքում);</p> <ul style="list-style-type: none"> - առավելագույն հաղթահարելի վերելքը՝ 15%: - արտաքին աղմուկի մակարդակը (7,5մ հեռավորության վրա)՝ 77դԲ (ասֆալտապատ ճանապարհով 50կմ/ժ արագության դեպքում) <p>Շարժաբեր էլեկտրաշարժիչ՝</p> <ul style="list-style-type: none"> - հզորությունը՝ 190 կՎտ, - շրջակա միջավայրի-40°C-ից մինչև 55°C ջերմաստիճանների պայմաններում կանոնավոր աշխատելու հնարավորություն; - առավելագույն ՕԳԳ-ն՝ 94% - բարձր հուսալիություն և արդյունավետություն; - շարժաբեր էլեկտրահաղորդիչը ապահովում է վերանորոգման և 						
--	--	---	--	--	--	--	--	--

			<p>տեխնիկական գնման հարմարավետություն: Հոսանքընդունիչ համակարգ՝ – Օգտագործվում է այլումինե համաձուլվածքից մետաղաձողային հոսանքընդունիչ (մեկուսիչ ծածկույթով), որոնց տարքը եզրաչափքերից 680 մմ, – Օգտագործվում է էլեկտրոնային կառավարմամբ օդաճնշական հոսանքհանիչ: Ուժակուտակիչ մարտկոց՝ – օգտագործվում է լիթիում–երկաթ– ֆոսֆատային կուտակիչ; – կուտակչի մարտկոցը կահավորված է շուրջօրյա մշտադիտարկման համակարգով; – մարտկոցների ջերմային կառավարման համար</p>						
--	--	--	--	--	--	--	--	--	--

		<p>օգտագործվում է հեղուկ սառեցման և հեղուկ տաքացման համակարգեր:</p> <p>Էլեկտրական օդային ճնշակ՝</p> <p>Ունի լարման ավտոմատ նույնականացման գործառույթ: Առկա է հակավթարային պաշտպանություն, իսկ գերտաքացման, գերլարման, ցածր լարման և ֆազի ընդհատման դեպքերում ապահովում է, որպեսզի էլեկտրաշարժիչի համակարգն անջատվի ժամանակին:</p> <p>Անիվներ և դողեր՝</p> <p>– օգտագործվում են անխուց դողեր՝ տրոլեյրուսների համար նախատեսված պահպանաշերտերով;</p> <p>–անվադողի տեսակը՝ 275/70R 22.5</p> <p>Ջերմաստիճանի կարգավորում և ջերմամեկուսացում՝</p>					
--	--	---	--	--	--	--	--

			<ul style="list-style-type: none">- վարորդի խցիկը կահավորված է տաքացուցիչով, իսկ ուղևորասրահը՝ ջեռուցման էլեկտրական ռադիատորներով;- տրոլեյբուսում տեղադրված է տաքացման և սառեցման էլեկտրական օդորակիչ՝ օդային զտիչներով:							
--	--	--	---	--	--	--	--	--	--	--

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «2 111 624 687» թիվը փոխարինել «3 629 624 687» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան